ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
22 հուլիսի 2025 թվականի N 1079-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 101-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով քաղաքացիներ Հակոբ Միշայի Եղիազարյանին, Սոնյա Ռազմիկի Հովհաննիսյանին, Արամ Հակոբի Եղիազարյանին, Ավետիս Հակոբի Եղիազարյանին, Արա Հակոբի Եղիազարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասերից / վկայական N 13122024-05-0068 տրված 2002 թվականի հունիսի 28-ին, վկայական N 17072025-05-0032 տրված 2002 թվականի հունիսի 28-ին, վկայական N 13122024-05-0034 տրված 2024 թվականի դեկտեմբերի 13-ին / հրաժարվելու մասին դիմումը, ***որոշում եմ***

1. Քաղաքացիներ Հակոբ Միշայի Եղիազարյանին, Սոնյա Ռազմիկի Հովհաննիսյանին, Արամ Հակոբի Եղիազարյանին, Ավետիս Հակոբի Եղիազարյանին, Արա Հակոբի Եղիազարյանին սեփականության իրավունքով պատկանող գ. Սարուխան հասցեում գտնվող 0.1428 հա մակերեսով 05-078-0471-0024 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության վարելահողը, 0.126 հա մակերեսով 05-078-0528-0316 կադաստրային ծածկագրով, 0.0222 հա մակերեսով 05-078-0526-0313 կադաստրային ծածկագրով խոտհարքները ճանաչել համայնքային սեփականություն:
2. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշումն ընդունելուց հետո՝ 15-օրյա ժամկետում այն ներկայացնել կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման համար:
3. Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նկատմամբ իրավունք հավաստող վկայականը ստանալուց հետո՝ համայնքի ավագանու առաջիկա նիստում ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հուլիսի 22
ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
23 հուլիսի 2025 թվականի N 1080-Ա

ԱՃՈՒՐԴԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16/ և 24/, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3/ կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 69-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով Գավառի համայնքապետարանի աճուրդային հանձնաժողովի 23.07.2025թ. N 3 արձանագրությունը, ***որոշում եմ***

1. Գավառ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող TOYOTA CAMRY 2,4, VAZ 21906, NIVA VAZ 21214, MITSUBISHI MONTERO-SPORT-3,5, GAZ 3102 և GAZ 3110 մակնիշի տրանսպորտային միջոցներ աճուրդով օտարելու նպատակով 2025թ. հուլիսի 23-ին հայտարարված աճուրդը համարել չկայացած, քանի որ աճուրդի մասնակցության ոչ մի հայտ չի ներկայացվել :
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հուլիսի 23
ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
23 հուլիսի 2025 թվականի N 1081-Ա

ԱՃՈՒՐԴԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16/ և 24/, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3/ կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 69-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով Գավառի համայնքապետարանի աճուրդային հանձնաժողովի 22.07.2025թ. N 3 արձանագրությունը, ***որոշում եմ***

1. Գավառ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 07122021-05-0057/ բնակավայրերի նպատակային նշանակության, 0,07837 /զրո ամբողջ յոթ հազար ութ հարյուր երեսունյոթ հարյուրհազարերորդական/ հա մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողատեսքն ու հողամասի վրա առկա շինությունները աճուրդով օտարելու նպատակով 2025թ. հուլիսի 22-ին հայտարարված աճուրդը համարել չկայացած, քանի որ աճուրդի մասնակցության ոչ մի հայտ չի ներկայացվել :
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հուլիսի 23
ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
23 հուլիսի 2025 թվականի N 1082-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16/ և 24/, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3/ կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ, 68-րդ, 70-րդ հոդվածների դրույթներով, հիմք ընդունելով Գավառի համայնքապետարանի աճուրդային հանձնաժողովի 22.07.2025թ. N1 և N2 արձանագրությունները, ***որոշում եմ***

1. Գավառ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 213122024-05-0077) 18,6 (տասնութ ամբողջ վեց տասնորդական) քմ մակերեսով տաղավարն ու տաղավարի զբաղեցրած և սպասարկման համար նախատեսված բնակավայրերի նպատակային նշանակության 0,002 (զրո ամբողջ երկու հազարերորդական) հա մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը (գույքը)՝ 4 548 000 (չորս միլիոն հինգ հարյուր քառասունութ հազար)ՀՀ դրամ արժեքով օտարել 2025 թվականի հուլիսի 22-ին կայացած աճուրդում հաղթող ճանաչված Գրիգոր Սամվելի Ամիրխանյանին:
2.Իրազեկել աճուրդում հաղթող ճանաչված Գրիգոր Սամվելի Ամիրխանյանին, որ նա պարտավոր է տասնօրյա ժամկետում վճարել 2025 թվականի հուլիսի 22-ին կայացած աճուրդի սակարկությունների ընթացքում իր առաջարկած գինն ամբողջությամբ, ինչպես նաև նշված հողամասի պետական գրանցման համար Գավառ համայնքի կատարած 35000 /երեսունհինգ հազար/ ՀՀ դրամի փոխհատուցման գումարը:
3.ՀանձնարարելիամայնքապետարանիաշխատակազմիիրավաբանականբաժնիպետԱ
ՐաԳևորգյանին՝ 2025 թվականի հուլիսի 22-ին կայացած աճուրդում հաղթող ճանաչված Գրիգոր Սամվելի Ամիրխանյանի կողմից գումարն ամբողջովին վճարելուց հետո նրա հետ օրենքով սահմանված կարգով կնքել գույքի առուվաճառքի պայմանագիր:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հուլիսի 23
ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
23 հուլիսի 2025 թվականի N 1083-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ԿԱՐՄԻՐԳՅՈՒՂ Գ. ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑ 18 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՈՐԻԿ ԿԱՐԱՊԵՏԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 25.06.2025թ. տրված Կարմիրգյուղ համայնքի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 17.04.1991թ. թիվ 3 որոշումից քաղվածքը, Գավառ համայնք գյուղ Կարմիրգյուղ Գ. Նժդեհի փողոց 18 հասցեի գույքի նկատմամբ ժառանգ /վկայագիր՝ տրված 11.07.2025թ./ Բորիկ Կարապետի Մարգարյանի /ծնված 02.03.1960թ-ին/ դիմումը, «Դավիթ Առաքելյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ համայնք գյուղ Կարմիրգյուղ Գ. Նժդեհի փողոց 18 հասցեում գտնվող ընդհանուր հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.08 հա, ինչը փաստացի կազմում է 0.09588 հա, որը Բորիկ Կարապետի Մարգարյանին /ծնված 02.03.1960թ-ին/ ժառանգության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական կառուցված 252.40 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1968-1992թթ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.09588 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, ***որոշում եմ***

1. Վերականգնել Գավառ համայնք գյուղ Կարմիրգյուղ Գ. Նժդեհի փողոց 18 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Բորիկ Կարապետի Մարգարյանի /ծնված 02.03.1960թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար հատկացված 0.08 հա օրինական հատկացված հողամասից ավել փաստացի օգտագործվող 0.01588 հա հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0.09588 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 252.40 քմ ընդհանուր մակերեսով շինությունների /կառուցված 1968-1992թթ./ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:

2. Անշարժ գույքին տրամադրել Գավառ համայնք, գյուղ Կարմիրգյուղ, Գ. Նժդեհի փողոց, 18 հասցեն:

3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հուլիսի 23
ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
24 հուլիսի 2025 թվականի N 1084-Ա

ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ 15-ՐԴ ՓՈՂՈՑ 2 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՌՈՒԶԱՆՆԱ ՍՏԵՓԱՆԻ ՍԱՌԱՋՅԱՆԻ, ՄԱՐԻՆԵ ՄԱՆՎԵԼԻ ԶԻՐՈՅԱՆԻ, ՍՏԵՓԱՆ ՄԱՆՎԵԼԻ ԶԻՐՈՅԱՆԻ, ՍԱԹԵՆԻԿ ՄԱՆՎԵԼԻ ԶԻՐՈՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի, Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 16.07.2025թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 05.11.1991թ. թիվ 270 որոշումից քաղվածքը, Գավառ քաղաքի Ազատության 15-րդ փողոց 2 հասցեի գույքի նկատմամբ ժառանգ /վկայագիր՝ տրված 18.07.2025թ./ Ռուզաննա Ստեփանի Սառաջյանի /ծնված 29.03.1959թ-ին/ դիմումը, «Հայր և որդի Դավոյաններ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, համաձայն որի Գավառ քաղաք Ազատության 15-րդ փողոց 2 հասցեում գտնվող հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.08 հա, ինչը փաստացի կազմում է 0.08514 հա, որը Ռուզաննա Ստեփանի Սառաջյանին /ծնված 29.03.1959թ-ին/ ժառանգության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.08514 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, ***որոշում եմ***

1. Վերականգնել Գավառ քաղաքի Ազատության 15-րդ փողոց 2 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Ռուզաննա Ստեփանի Սառաջյանի /ծնված 29.03.1959թ-ին/, Մարինե Մանվելի Զիրոյանի /ծնված 06.07.1984թ-ին/, Ստեփան Մանվելի Զիրոյանի /ծնված 05.09.1985թ-ին/, Սաթենիկ Մանվելի Զիրոյանի /ծնված 03.11.1990թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար 0.08 հա օրինական հատկացված հողամասից ավել փաստացի օգտագործվող 0.00514 հա հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 0.08514 հա ընդհանուր մակերեսով հողամասի նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:

2. Հողամասին տրամադրել Գավառ քաղաք, Ազատության 15-րդ փողոց, 2 հասցեն:

3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հուլիսի 24
ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
24 հուլիսի 2025 թվականի N 1085-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 101-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով քաղաքացիներ Երուն Կարապետի Թորոսյանին, Ռազմիկ Սերյոժայի Թորոսյանին, Անժիկ Ռազմիկի Գափոյանին, Լուսինե Ռազմիկի Թորոսյանին, Սերգե Ռազմիկի Թորոսյանին, Լիանա Ռազմիկի Թորոսյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասերից / վկայական N 967963 տրված 2004 թվականի մայիսի 31-ին, վկայական N 967962 տրված 2004 թվականի մայիսի 31-ին / հրաժարվելու մասին դիմումը, ***որոշում եմ***

1. Քաղաքացիներ Երուն Կարապետի Թորոսյանին, Ռազմիկ Սերյոժայի Թորոսյանին, Անժիկ Ռազմիկի Գափոյանին, Լուսինե Ռազմիկի Թորոսյանին, Սերգե Ռազմիկի Թորոսյանին, Լիանա Ռազմիկի Թորոսյանին սեփականության իրավունքով պատկանող գ. Կարմիրգյուղ հասցեում գտնվող 0.349 հա մակերեսով 05-056-0337-0003 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության վարելահողը, 0.227 հա մակերեսով 05-056-0601-0172 կադաստրային ծածկագրով խոտհարքը ճանաչել համայնքային սեփականություն:
2. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշումն ընդունելուց հետո՝ 15-օրյա ժամկետում այն ներկայացնել կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման համար:
3. Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նկատմամբ իրավունք հավաստող վկայականը ստանալուց հետո՝ համայնքի ավագանու առաջիկա նիստում ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հուլիսի 24
ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
28 հուլիսի 2025 թվականի N 1086-Ա

ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ԱՐԾՎԱՔԱՐ ԹԱՂԱՄԱՍԻ Գ.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՓՈՂՈՑ 11 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆԳԻՆ ԱՐԱՄԱՅԻՍԻ ՈՍԿԱՆՅԱՆԻ, ՄԵԼՔՈՆ ՌԱՖԻԿԻ ՈՍԿԱՆՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 17.02.2025թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 27.04.1991թ. թիվ 8 որոշումից քաղվածքը, Գավառ քաղաքի Արծվաքար թաղամասի Գ.Միքայելյան փողոց 11 հասցեի գույքի նկատմամբ ժառանգ /վկայագիր՝ տրված 15.07.2025թ./ Մելքոն Ռաֆիկի Ոսկանյանի /ծնված 22.11.1960թ-ին/ լիազորված անձ /լիազորագիր 77 ԱԴ 8463958՝ տրված 17.06.2025թ-ին/ Մարինե Մոլոտովի Մելիքյանի /ծնված 26.10.1971թ-ին/ դիմումը, «Հայր և որդի Դավոյաններ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ քաղաքի Արծվաքար թաղամասի Գ.Միքայելյան փողոց 11 հասցեում գտնվող ընդհանուր հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.07 հա, ինչը փաստացի կազմում է 0.07664 հա, որը Մելքոն Ռաֆիկի Ոսկանյանի /ծնված 22.11.1960թ-ին/ ժառանգության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական կառուցված 422.4 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1962-1980թթ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.07664 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, ***որոշում եմ***

1. Վերականգնել Գավառ քաղաքի Արծվաքար թաղամասի Գ.Միքայելյան փողոց 11 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Անգին Արամայիսի Ոսկանյանի /ծնված 01.02.1938թ-ին/, Մելքոն Ռաֆիկի Ոսկանյանի /ծնված 22.11.1960թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար 0.07 հա օրինական հատկացված հողամասից ավել փաստացի օգտագործվող 0.00664 հա հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 0.07664 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 422.4 քմ ընդհանուր մակերեսով շինությունների /կառուցված 1962-1980թթ./ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:

2. Անշարժ գույքին տրամադրել Գավառ քաղաք, Արծվաքար թաղամասի Գ.Միքայելյան փողոց, 11 հասցեն:

3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հուլիսի 28
ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
28 հուլիսի 2025 թվականի N 1087-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության Գեղարքունիքի մարզի Նորատուս գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին 08 ապրիլի 2004թ. N 452-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման,.հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ Կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն որոշմամբ, ***որոշում եմ***

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի /կադաստրային ծածկագիր 05-071-0079-0027/ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասից առանձնացնել 0.01805 հա մակերեսով հողատարածքը և տրամադրել Գավառ համայնք, գյուղ Նորատուս, Սարալանջի փողոց, 20/2 հասցեն:

2. Հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի այլ հողատեսքից փոխել բնակելի կառուցապատման հողատեսքի:

3. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հուլիսի 28
ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
29 հուլիսի 2025 թվականի N 1088-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ՆՈՐԱՏՈՒՍ Վ. ՄԱՄԻԿՈՆՅԱՆ ՓՈՂՈՑ 15 ՀԱՍՑԵԻ ԿԵՐԱԽՈՀԱՆՈՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԻՐՎԱՐԴ ՎԱՂԻՆԱԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի, «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 04.10.2005թ. ընդունված ՀՕ-199-Ն ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի, Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով Գավառ համայնք գյուղ Նորատուս Վ. Մամիկոնյան փողոց 15 հասցեի գույքի նկատմամբ ժառանգ /վկայագիր՝ տրված 10.06.2024թ./ Սիրվարդ Վաղինակի Խաչատրյանի /ծնված 14.02.1963թ-ին/ դիմումը, Միեր Հրանտի Գնդոյանին կերախոհանոցի սեփականաշնորհման համար կազմված հաշվարկի ակտը, «Հայր և որդի Դավոյաններ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, որոնց համաձայն Գավառ համայնք գյուղ Նորատուս Վ. Մամիկոնյան փողոց 15 հասցեում գտնվող հողամասը չափագրվել է /ծածկագիր 05-071-0017-0004/ և հաշվի առնելով, որ 1977թ-ին օրինական կառուցված 271.10 քմ մակերեսով կերախոհանոցի կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 1.21459 հա մակերեսով հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, ***որոշում եմ***

1. Վերականգնել Գավառ համայնք գյուղ Նորատուս Վ. Մամիկոնյան փողոց 15 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Սիրվարդ Վաղինակի Խաչատրյանի /ծնված 14.02.1963թ-ին/ հողօգտագործման իրավունքը, կերախոհանոցի կառուցման և սպասարկման համար հատկացված հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը կերախոհանոցի կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 1.21459 հա ընդհանուր մակերեսով հողամասի նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 04.10.2005թ. ընդունված.ՀՕ-199-Ն ՀՀ օրենքի հողամասը սեփականության իրավունքով անհատույց ձեռք բերելուց հետո հողամասի կամ դրա մասի առուվաճառքի, նվիրատվության, փոխանակման կամ իրավաբանական անձանց լուծարումից հետո նրա հիմնադիրներին (մասնակիցներին) հանձնման, այդ թվում՝ պարտատերերի պահանջների բավարարման կամ բռնագանձման հետևանքով հողամասի իրացման (այդ թվում՝ գրավառուի կողմից բռնագանձման հետևանքով հողամասը գրավատուից ձեռքբերման) դեպքում՝ անկախ այն հանգամանքից, թե հողամասը ձեռք է բերվել հատուցմամբ կամ անհատույց, ձեռք բերողը պետական կամ համայնքային բյուջե պետք է վճարի հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքը:

2. 1977-2013թթ-ին ինքնակամ կառուցված 3016.80 քմ ընդհանուր մակերեսով շինությունները ճանաչել որպես ինքնակամ շինություններ:

3. Անշարժ գույքին տրամադրել Գավառ համայնք, գյուղ Նորատուս, Վ. Մամիկոնյան փողոց, 15 հասցեն:

4. Շենք-շինությունները չեն հակասում քաղաքաշինական նորմերին և դրանց մակերեսները որոշվում են քարտեզագրման, գեոդեզիայի, չափագրման /հաշվառման/ և հողաշինարարության գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող կազմակերպությունների /անձի/ կողմից տրված հատակագծերին համապատասխան:

5. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

6. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հուլիսի 29
ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
29 հուլիսի 2025 թվականի N 1089-Ա

ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ Դ. ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ 9 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 24.07.2025թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 05.11.1991թ. թիվ 270 որոշումից քաղվածքը, Գավառ քաղաքի Դ. Դեմիրճյան փողոց 2-րդ փակուղի 9 հասցեի գույքի սեփականատեր Հովհաննես Խաչատուրի Խաչատրյանի /ծնված 10.01.1960թ-ին/ դիմումը, «Դավիթ Առաքելյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ քաղաքի Դ. Դեմիրճյան փողոց 2-րդ փակուղի 9 հասցեում գտնվող հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.06 հա, ինչը փաստացի կազմում է 0.08945 հա, որը Հովհաննես Խաչատուրի Խաչատրյանին /ծնված 10.01.1960թ-ին/ սեփականության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական կառուցված 249.20 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1945-1985թթ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.08945 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, ***որոշում եմ***

1. Վերականգնել Գավառ քաղաքի Դ. Դեմիրճյան փողոց 2-րդ փակուղի 9 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Հովհաննես Խաչատուրի Խաչատրյանի /ծնված 10.01.1960թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար 0.06 հա օրինական հատկացված հողամասից ավել փաստացի օգտագործվող 0.02945 հա հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0.08945 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 249.20 քմ ընդհանուր մակերեսով շինությունների /կառուցված 1945-1985թթ./ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:

2. Անշարժ գույքին տրամադրել Գավառ քաղաք, Դ. Դեմիրճյան փողոց, 2-րդ փակուղի, 9 հասցեն:

3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հուլիսի 29
ք. Գավառ